ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ ՌԵԿՏՈՐԻ

ՀՐԱՄԱՆ

N° 087/2017-Ա
«07» հունիսի 2017թ.

ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ 2017 ԹՎԱԿԱՆԻ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐՎԱ ԴԱՏԱՎՈՐՆԵՐԻ ԹԵԿՆԱԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՑՈՒՑԱԿՈՒՄ ԸՆԴԳՐԿՎԱԾ ԱՆՁԱՆՑ (ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ, ՔՐԵԱԿԱՆ ԵՎ ՎԱՐՉԱԿԱՆ ՄԱՍՆԱԳԻՏԱՑՈՒՄ) ԲԱՇԽՈՒՄԸ ԸՍՏ ՓՈՐՁԱՇՐՋԱՆԻ ՂԵԿԱՎԱՐՆԵՐԻ ԿԱՏԱՐԵԼՈՒ ԵՎ ՓՈՐՁԱՇՐՋԱՆԻ ԱՆՀԱՏԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Արդարադատության ակադեմիայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 10-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետով, 23-րդ հոդվածով, 24-րդ հոդվածի 3-րդ և 4-րդ մասերով, հիմք ընդունելով Արդարադատության ակադեմիայի կառավարման խորհրդի կողմից 26.01.2017թ. թիվ ԿԽ-001/17/3 որոշմամբ հաստատված Դատավորների թեկնածությունների ցուցակում ընդգրկված անձանց մասնագիտական պատրաստման 2017թ. ուսուցման ծրագիրը, Արդարադատության ակադեմիայի կառավարման խորհրդի կողմից 06.06.2014թ. ընդունված թիվ 14-Լ որոշումը, Հայաստանի Հանրապետության դատարանների նախագահների խորհրդի 31.03.2017թ. թիվ 15Լ որոշումը՝

Հրամայում եմ

1. Հաստատել Արդարադատության ակադեմիայի 2017թ. ուսումնական տարվա դատավորների թեկնածությունների ցուցակում ընդգրկված անձանց (քաղաքացիական, քրեական և վարչական մասնագիտացում) բաշխումը ըստ փորձաշրջանի ղեկավարների՝ համաձայն Հավելված 1-ի:
2. Հաստատել Արդարադատության ակադեմիայի 2017թ. ուսումնական տարվա դատավորների թեկնածությունների ցուցակում ընդգրկված անձանց (քաղաքացիական մասնագիտացում)՝ առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանում փորձաշրջանի անհատական ծրագիրը՝ համաձայն Հավելված 2/1-ի:
3. Հաստատել Արդարադատության ակադեմիայի 2017թ. ուսումնական տարվա դատավորների թեկնածությունների ցուցակում ընդգրկված անձանց (քաղաքացիական մասնագիտացում)՝ ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանում փորձաշրջանի անհատական ծրագիրը՝ համաձայն Հավելված 2/2-ի:
4. Հաստատել Արդարադատության ակադեմիայի 2017թ. ուսումնական տարվա դատավորների թեկնածությունների ցուցակում ընդգրկված անձանց (քաղաքացիական մասնագիտացում)՝ ՀՀ վճռաբեկ դատարանում փորձաշրջանի անհատական ծրագիրը՝ համաձայն Հավելված 2/3-ի:

5. Հաստատել Արդարադատության ակադեմիայի 2017թ. ուսումնական տարվա դատավորների թեկնածությունների ցուցակում ընդգրկված անձանց (վարչական մասնագիտացում)՝ վարչական դատարանում փորձաշրջանի անհատական ծրագիրը՝ համաձայն Հավելված 3-ի:

6. Հաստատել Արդարադատության ակադեմիայի 2017թ. ուսումնական տարվա դատավորների թեկնածությունների ցուցակում ընդգրկված անձանց (քրեական մասնագիտացում)՝ առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանում փորձաշրջանի անհատական ծրագիրը՝ համաձայն Հավելված 4-ի:

Ռեկտոր **Ս.Առաքելյան**